

ՖԵԼԻԵՏՈՒ

## ՄՆՈՒՄ Է ԽՆՁՈՐՆԵՐԻ ՀԱՐՑԸ

### ԱՐՏ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հին-հին՝ հեքիաթներում անմահական ջուր, խնձոր կամ պարզապես հազարան բլբուլ ձեռք բերել ցանկացողները ճանապարհին մի տեղ են ընկնում, որտեղից երկու ելք կա՝ դեպի լույս ու մութ աշխարհները: Եվ քանի որ այն ժամանակ վերելակներ չկային ապա այդ դերն իրենց վրա էին վերցրել երեք նշանավոր ոչխարները՝ սևը, մոխրագույնը և սպիտակը:

Կախարդի հաստիքով մի պառավ սովորաբար ճամփորդին խորհուրդ էր տալիս սկզբում նստել սև ոչխարին, որը նրան կնետի մոխրագույնին, մոխրագույնն էլ սպիտակին: Իսկ սպիտակը, հասկանալի է, որ դուրս կբերի լույս աշխարհ: Բայց ոչ բոլորն էին կարողանում ճիշտ օգտվել կախարդուհու ուղեցույց-հրահանգից: Նրանք ազահությունից և շտապելուց իրենց անմիջապես նետում էին սպիտակ ոչխարի վրա և փոխանցման կարգով հայտնվում մութ աշխարհում:

Այսի՞նքն: Այսինքն հեքիաթն ապացուցում է, որ ոչխարների գույները խորհրդանշաններ են և որ նույնիսկ հեքիաթներում ինչ-որ սահմանված կարգ կա: Ուզո՞ւմ ես լույս աշխարհ դուրս գալ, պետք է ենթարկվես կարգին, հակառակ դեպքում քեզ հետ կպատահի այն, ինչ պատահեց Երևանի Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի դոցենտ Ա. Թովմասյանի հետ 1965 թվականի դեկտեմբերի 24-ին, ժամը...

Արժանահիշատակ Ա. Թովմասյանը մի օր «Հեռուստատեսության և ֆոտոհեռագրության պատմությունից» անունով մի աշխատություն է գրում և իրեն նետում սպիտակ ոչխարի վրա: Չէ՛, սկզբից չի նետում: Սկզբում նրան հայտնի է դառնում, որ իրենից շատ-շատ շաբաթներ առաջ մեկ ուրիշը այդ նույն թեմայով աշխատություն է գրել, որը ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի ղեկավարության հավանությանն է արժանացել և հանձնարարվել է տպագրելու «Հայաստան» հրատարակչությունում, ինչպես կարգն է 1966 թվականին: Իմանալով այդ, և իմանալով նաև, որ իր աշխատությունը նույնպես նախ և առաջ պետք է գրախոսվի, ուսումնասիրվի և հրատարակչական ճանապարհ անցնի լույս աշխարհ դուրս գալու համար, հարգելի դոցենտը, վստահ չլինելով իր գործի վրա կամ ինչ-ինչ պատճառներով վախ է ապրում և որոշում... շրջանցել կարգն ու օրենքները:

Եվ այստեղ կատարվում է հրաշք: Այն մարդիկ, որ կոչված են պահպանելու սահմանված կարգն ու օրենքները, հանկարծ, ինչ-որ կախարդանքով, վերածվում են կարգը խախտողների «ով որքան կարող է» սկզբունքով:

Որպես առաջամարտիկ հանդես է գալիս մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր Պ. Սեյրանյանը: Շրջանցելով օրենքները, նա 1965 թվականի նոյեմբերի 1-ին մի գրություն է ուղարկում «Լույսն» հրատարակչության գլխավոր խմբագիր Ա. Հովսեփյանին, խնդրելով

պատվերի կարգով ընդունել և հրատարակել Թովմասյանի աշխատությունը հինգ մամուլ ծավալով և 500 օրինակ տպաքանակով: Ըստ որում արժանապատվությամբ ավելացնում է, որ «հրատարակության հետ կապված ծախսերը ինստիտուտը վերցնում է իր վրա»:

Սեյրանյանին քաջ հայտնի էր, որ ինքը նման գրություն ուղարկելու իրավունք չունի, իսկ Հովսեփյանն էլ հրաշալի գիտեր, որ իր հերթին ինքն էլ բացարձակապես ոչ մի իրավունք չունի նման պատվեր ընդունելու: Բայց կախարդանքը սկսված էր: Եվ նա ոչ միայն ընդունում է պատվերը, այլև առանց ինստիտուտի հետ պայմանագիր կնքելու, առանց պատվերը ձևակերպելու, առանց նյութը խմբագրության հանձնելու, առանց ձևավորման ու տեխնիկական խմբագրության, առանց խղճի խայթի և այլ մանրուքների տեղն ու տեղը նայն գրության վրա մակագրում է «Կոմբինատի դիրեկտորին. խնդրում եմ ընկ. Թովմասյանի աշխատությունը ընդունեք և տպագրեք «Լույս» հրատարակչության մարկայով»:

Պոլիգրաֆկոմբինատի դիրեկտոր Ա. Նազարյանին արդեն բոլորն էլ լավ գիտեն: Նա այն մարդկանցից է «յոթ անգամ չափիր, նոր կտրիր առածի «չափիր» մասը, «զգուշությունը լավ բան է» ասացվածքի հիման վրա հասցնում են հազարի: Սակայն ի՞նչ կարող ես ասել, երբ նա էլ էր հմայված:

Նայելով կախարդական գրությանը հարգելի ընկ. Նազարյանը մոռանալով ամեն ինչ՝ իր կոչումը, պատասխանատվության զգացումը, կարգ ու կանոնը, մոռանալով պահանջել ձեռագրի համար պարտադիր հրատարակչության տեխնիկական փաստաթղթերը, հերթի դրված տասնյակ գործերը, մոռանալով նույնիսկ թուղթ պահանջել, երկու օր անց, գրության վրա մակագրում է «Արտ. բաժնին ընդունել» և նույնիսկ սրտաշարժ հոգաձությամբ ավելացնում է ներքևում. «Կոնտոլ սրբագրության»:

Եվ բացառիկ արագությամբ ռեկորդային ժամկետներում, որը մի այն դեպքում բարձր կինչեցներ Հայաստանի պոլիգրաֆիստների անունը, տպագրվում է գիրքը: Տպագրվում է նույնիսկ առանց հրատարակչության կողմից ազդանմուշի հաստատման: Այդ ընթացքում ծառայած բոլոր խոչընդոտները «Թովմասյան և ընկ.» ֆիրմայի կողմից արագորեն հարթվում են: Նախ՝ գրքի գնի հարցը: Գինը պետք է որոշի հրատարակչությունը՝ ըստ սահմանված նորմաների: Հաշիվներ պետք է անել: Բայց չէ՞ որ գլխավոր խմբագիր Ա. Հովսեփյանը թաքուն է հրատարակում գիրքը: Հենց որ ներկայացնի հաշվարկի՝ կրոնվի: Դրա համար էլ տպարանում հարցնում են հեղինակին.

- Ի՞նչ գին կուզես դնենք:

- Բարձր գին, շատ՝ արժեքավոր գիրք է, - ասում է հեղինակը:

- 50 կոպեկ դնենք:

- Դրեք, - ասում է հեղինակը և 14 կոպեկանոց գիրքը գնահատվում է 50 կոպեկ:

Գրքում հրատարակելու համար անհրաժեշտություն է առաջանում պատրաստել 26 լուսանկարի կլիշե: Դրանք պետք է պատվիրի հրատարակչությունը և այն էլ համար 1 տպարանին: Բայց կլիշեները պատվիրելու գործը սիրով իր վրա է վերցնում մանկավարժական ինստիտուտի մեկ այլ պրոռեկտոր Բ. Վերդյանը, որը գրությամբ

ակադեմիայի Էջմիածնի տպարանին խնդրում է «Ինստիտուտի դոցենտ Ա. Թովմասյանի աշխատության համար պատրաստել 26 կլիշեներ»:

- Է՛, իսկ մեր փողը ո՞վ պետք է տա,— հարցնում են տպարանի աշխատողները,- ինստիտու՞տը:

- Ե՛ս,— պատասխանում է աշխատության հեղինակ Ա. Թովմասյանը, կանխիկ վճարում արժեքը, վերցնում կլիշեները ու տանում պոլիգրաֆ կոմբինատ:

- Է՛, իսկ գրքի տպագրության ծախսերը ո՞վ պետք է տա,- հարցնում են պոլիգրաֆ կոմբինատի աշխատողները:

- Ե՛ս,— պատասխանում է աշխատության հեղինակ Ա. Թովմասյանը, գրպանից հանում 116 ռ. 99 կոպեկ և դնում վաճառա... գանձապահի սեղանին:

- Կանխիկ ընդունելու իրավունք չունենք, գիտե՞ք դրա համար մեր գլխավոր հաշվապահ Մանուչարյանն ինչ կանի,— գունատվում է գանձապահը,— սպասեք, հարցնեմ:

– Ընդունիր,— առանց աչքը թարթելու շնչում է Մանուչարյանը:

Հեղինակը մոռում է գումարը ու հետն էլ առաջարկում.

- Դե, գրքերս տվեք, գնամ:

- Ի՞նչ գրքեր,— փորձում են կախարդանքին դիմադրել տպարանի աշխատողները: – Տպաքանակը հրատարակչությունը պետք է տանի հատուկ լիազորագրով, Հայգրքի առևտրի վարչությանը պետք է հանձնի, որովհետև միայն Հայգիրքն իրավունք ունի գիրք վաճառելու...

- Տվեք, տվեք, ես ինքս կծախեմ,— ասում է դոցենտը և հմայված տպագրիչների ոչինչ չտեսնող աչքերի առջև, գրքի բոլոր 500 օրինակն էլ ուսած հեռանում է անորոշ ուղղությամբ:

Հրաշք չէ, ի՞նչ է:

Մամուլի պետական կոմիտեն, որ հրատարակվող յուրաքանչյուր գրքի ազդանմուշը, հասկանալիորեն, պետք է ստանա տպագրությունից առաջ, ստանում է միայն դեկտեմբերի 28-ին, տպաքանակի հափշտակությունից չորս օր հետո: Ստանում են և համոզվում, որ մոխրագույն ոչխարն իր գործը տեսել է: Գրքի շապիկի վրա գրված է «Լույս» հրատարակչություն, իսկ անվանաթերթին «Հայաստան» հրատարակչություն: Բայց դա ի՞նչ գրքի վրա չկա պատվիրատուի մանկավարժական ինստիտուտի անվանումը, չկան խմբագրի, սրբագրիչի, տեխնիկական խմբագրի ազգանունները...

Ինչպես արկածային վեպերում է ասվում՝ մշուշը սկսում է ցրվել: Կոմիտեի աշխատողները, ի պատիվ իրենց, անմիջապես մերկացնում են «Թովմասյան և ընկ.» ընդհատակյա գործունեությունը և մանկավարժական ինստիտուտի ռեկտորի պաշտոնակատար Պ. Սեյրանյանից պահանջում ապօրինի հրատարակված գրքի տպաքանակը:

- Մի մասը ծախել ենք,— ասում է պրոռեկտորը:

Գրությամբ խնդրում են վերադարձնել մնացած մասը և հայտնել, թե ո՞ւմ միջոցով և ինչպես են վաճառել: Չէ՞ որ ոչ ոք իրավունք չունի վաճառք կազմակերպելու:

- Բոլորը ծախել ենք, պրծել,- ասում է պրոռեկտորը:

Մամուլի պետական կոմիտեի զարմացած և զայրացած ղեկավարները հրավիրում են իրենց իրավասության տակ գտնվող մեղավորներին ու քննում այդ արտառոց հարցը:

Չարաբաստիկ գիրքը հայտարարվում է ապօրինի, նետվում է սև հեքիաթի ոչխարի վրա ու այնտեղից էլ բարոյապես ընկնում մութ աշխարհ: Բարոյապես որովհետև գրքերը ֆիզիկապես վաղուց արդեն անհետացել են ձեռներեց դոցենտի և նրա պրոռեկտոր ընկերների օգնությամբ: Բայց դա արդեն բարձրագույն կրթության մինիստրության ոլորտն է:

Իսկ մեղավոր հրատարակիչնե՞րը: Նրանք պրծան թեթև վախով, հրճվանքով համոզվելով, որ հեքիաթներն իսկապես միշտ էլ երջանիկ վախճան են ունենում:

Մնում է խնձորների հարցը: